

բեմն «գանձ բազում ի կարաս թաքուցեալ՝ ի գետնափոր տան» կը ծածկէին հարստահարողաց երեսէն (Արժ. 125): — Կարասով կը պահէին քացախն ալ (Վաստ. 125):

Կարասձագ: Բնականապէս նախորդին փոքրն էր, որ կընար բովանդակել մինչեւ «տասն լիար», եւ կը գործածուէր նոյնպէս գինի պահելու (նոյն, 114): Սա կը մնայ դեռ Մշոյ մէջ՝ կարասի ձագ կամ խոպոզ կոչմամբ:

Ճառայ: Ստէպ յիշուած է Վաստակոց գրքէն (102, '14, '37). եւ կը նկարագրուի բեկանեւի, որով եւ կաւեղէն (նոյն, 107): Ունէր շնի (117). բերանը բաւական լայն, միրգը «ճղերովն» հանդերձ ընդունելու չափ (136). իսկ հասակով այնքան՝ որ կարասի մէջ կընար մտնել (117): Սա եւս գինւոյ ընդունարան էր, եւ մնացած է տակաւին ու ձռայ կը կոչուի Մշոյ մէջ, գուցէ եւ այլուր. ձեւով երկայն է, փորուոր, եւ կանթեր ունի պարանոցին ուղղութեամբ: — Ճառայ արաբ. բառ է:

Կահոյր: Շապուհ Հայաստանէն բերել կու տայ ուղտի երկու բեռն հող եւ «կահոյր մի ջուր», զոր կը «ցանեն» բերած հողին վրայ (Փաւս. 166). ուրեմն անօթիս ընդունած ջուրը սակաւ էր: Արդ կըր-